ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունվար, 2026 թվականի N 2-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2026 թվականի հունվարի 23-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի գործունեության մասին ընկերության գործադիր տնօրենի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին հարցը:
2. Հանրային հեռարձակողի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի № 103-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
3. Հանրային հեռարձակողի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի № 106-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի գործունեության մասին ընկերության գործադիր տնօրենի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին հարցը:
5. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

21 հունվար, 2025 թվական
ք. Երևան